

**«ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հռիփսիմե Զաքարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ zaqaryan_hripsime@mail.ru
ORCID: 0009-0004-2158-644X

Հոդվածը ներկայացվել է 13.03.2023, գրախոսվել է 23.03.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-182

Ամփոփում

«Միջտեքստայնություն» եզրույթն առաջին անգամ գործածվել է 1967 թ.՝ ֆրանսիացի հետկառուցվածքաբանության (պոստստրուկտուրալիզմի) տեսաբան Յու. Կրիստևայի «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» հոդվածում: Յու. Կրիստևան, հայեցակարգերի հիմքում ունենալով Մ. Բախտինի բազմահնչության տեսությունը, իր գործերում վերաիմաստավորում է միջտեքստային երկխոսության բախտինյան գաղափարը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ստեղծագործություն թանձրացնում է մշակութային կապերի պատմական փորձը, վերջինիս հետ «երկխոսական» ընթացք է ծավալում: Յուրաքանչյուր տեքստ, թաքնված թե ակնհայտ, հարաբերակցվում է այլ մշակութային տեքստերի հետ: Այսպես, միջտեքստայնությունն ընկալվում է որպես յուրաքանչյուր տեքստի առանձնահատուկ որակ:

Միջտեքստայնությունը մեկնաբանվում է նաև «լայն» (Յու. Կրիստևա, Ժ. Դերրիդա, Ռ. Բարտ) և «նեղ» (Ի. Սմիրնով, Յու. Սոլոգուբ, Ն. Կուզմինա, Ն. Ֆատեևա) իմաստներով: Լայն իմաստով՝ միջտեքստայնությունն ընդունվում է իբրև յուրաքանչյուր տեքստի յուրահատուկ որակ: Յուրաքանչյուր տեքստ ընկալվում է որպես միջատեքստ, որը կարող է նոր ձևավորվող տեքստի համար դառնալ նախատեքստ: Նեղ իմաստով՝ միջտեքստայնությունը մեկնաբանվում է որպես որոշակի տեքստերի առանձնահատուկ որակ. միջտեքստայնության դրսևորումներ ոչ բոլոր տեքստերում են նկատելի:

Նշանագիտական պլանում տեքստն ընկալվում է որպես նշանային ամբողջություն, իսկ միջտեքստային կապերը՝ տեքստում ընդգրկված նշանային համակարգի փոխհարաբերակցություն: Այս մոտեցման հիմքերը հարկ է փնտրել Յու. Լոտմանի ուսումնասիրություններում:

Բանալի բառեր՝ միջտեքստայնություն, տեքստ, նախատեքստ, նշանագիտություն, մշակույթ, փիլիսոփայություն, գեղարվեստական ստեղծագործություն:

Ներածություն

Գրական ստեղծագործությունը, որն իր ընդհանրության մեջ ոչ թե ներփակ իմաստաբանական կառույց է, այլ հարատև զարգացող իմաստաբանական ամբողջականություն, դառնում է միջատեքստ: Հետևաբար ձևավորվում է տարբեր մշակութային ծածկագրերի ու տարաբնույթ խոսույթների

(դիսկուրսների) «կտորվանքներով» կառուցված առանձնահատուկ մի տարածություն, տարբեր նշանային համակարգեր կրող ու անվերջ ճյուղավորվող ու փոխազդող շղթայական հյուսվածք:

Ընդունված է համարել, որ միջտեքստայնության տեսությունը (այս տեսակետն առաջադրել է Մ. Յամպոլսկին¹) սկզբնավորվում է երեք սկզբնականքներից՝ բախտինյան բազմահնչության (պոլիֆոնիզմի) հասկացակարգից, Յու. Տինյանովի² պարողիայի առանձնահատուկ բնույթի մասին դիտարկումներից և Ֆ. դը Սոսյուրի «գրաշրջության տեսությունից», որը բնորոշվում է որպես լեզվի մեջ առաջնային ու երկրորդային միավորների (բառերի) տարաբաժանման հնարավորություն: Առաջնայինը լեզվական նախնական միավորներն են: Այդ միավորներից ածանցվում են նոր միավորներ, որոնք օժտվում են նոր իմաստով: Բառերը նշաններ են, որոնք աշխարհայացքային ընկալումներով միահյուսվում են գիտակցության մեջ ամփոփված իմաստակիր միավորների հետ՝ ձևավորելով նոր իմաստներ: Նույն տրամաբանությամբ՝ կոնկրետ տեքստային տարրերը, ներթափանցելով այլ տեքստային տարածություն, կարող են փոխակերպվել՝ նոր իմաստ ու բովանդակություն հաղորդելով ստեղծված տեքստին: Հետագայում «միջտեքստայնություն» եզրույթը ֆրանսիական հետկառուցվածքաբանության ներկայացուցիչների ուսումնասիրություններում տարածվում է սոսուրյան բանաձևով: Յու. Կրիստևան 1969 թ. տպագրված իր «Նշանագիտություն» գրքի «Գրաշրջության նշանաբանության մասին» գլխում³ (գլուխը գրվել էր դեռևս 1966 թ.) անդրադառնում է այդ բանաձևին՝ նշելով, որ գրաշրջության անգիտակցական կամ գիտակցված միտումով գործածումը բնորոշ է հատկապես հանգավորված բանաստեղծական տեքստերին:

Հավելենք նաև, որ միջտեքստայնության տեսության ձևավորման ու զարգացման հիմնական ուղղությունը հունավորել է «երկխոսայնության» բախտինյան հասկացակարգը:

¹ Հմմտ. Ямпольский 1993, 408: Համաձայն Մ. Յամպոլսկու՝ գրաշրջության (անագրամաների) սկզբունքը նույնանում է միջտեքստայնության էությանն այն իմաստով, որ նախատեքստն ընդունող տեքստում մեջբերվում է թաքնված կերպով: Հեղինակի տեսակետներում միջտեքստային կապերի առանձնահատուկ դրսևորումների նրբությունները սոսյուրյան դիտարկումներում են սկզբնավորապես ու հիմնավորապես ձևակերպվում:

² Թեև Յու. Տինյանովի միջտեքստային փոխհարաբերակցության մասին ուսումնասիրությունները միջտեքստայնության տեսության զարգացման խնդրում կարևորագույն արժեք են, արտասահմանյան հետազոտողների շրջանում այդ աշխատությունները քիչ են հայտնի: Հետազոտողների առավել լայն շրջանակին հայտնի են ու առանցքային նշանակություն ունեն Ֆ. դը Սոսյուրի աշխատությունները, որոնք, շնորհիվ լայն տարածման, գերակայություն են ստանում, դառնում միջտեքստայնության տեսության զարգացման հիմնաքարային արժեք ունեցող կարևորություններ, թեև, այնուամենայնիվ, նշյալ տեսության ձևավորման հիմքում ելակետային են բազմաթիվ լեզուներով թարգմանված և լայն տարածում ստացած Մ. Բախտինի համապատասխան աշխատությունները:

³ Հմմտ. Крестева 2013, 98-127:

Մ. Բախտինի երկխոսայնության տեսության փոխակերպումները կառուցվածքաբանության և հետկառուցվածքաբանության համատեքստում

«Երկխոսայնություն» (դիալոգիզմ) հասկացությունը, որին դեռևս 1924 թ. գիտական հիմնարար ձևակերպում է տվել Մ. Բախտինը, որպես կանոն, ընդունված է համարել միջտեքստայնության տեսության հիմք: Համաձայն Մ. Բախտինի հայեցակարգի՝ ստեղծագործողը, հեղինակային-անհատական աշխարհայացքը, սեփական գեղարվեստական արվեստի արարման գործընթացը պայմանավորելով-փոխհարաբերակցելով այլ հեղինակի ստեղծած հայեցաձևին, տեքստի իմաստային տեղեկատվությանը, առանցքային խորհրդանիշներին ու մոտիվներին՝ ձևավորում է համընդհանուր միջտեքստային հարաբերակցության դաշտ, որը խտացնում է մշակութային կապերի պատմական փորձը, վերջինիս հետ «երկխոսական» լայնահուն ընթացք է ծավալում, օրգանապես միահյուսվում նրան՝ միաժամանակ արդեն ստեղծված հայեցակարգային հիմքերի վրա կառուցելով նորը՝ պահպանելով գեղարվեստական հայեցողության սեփական կերպը, սեփական ստեղծագործության գաղափարագեղարվեստական, հայեցակարգային-գեղագիտական արժեքը: Այլ կերպ ասած՝ այս կամ այն գեղարվեստական ձևի բազմաբնույթ փոխհարաբերակցության համադրումները թույլ են տալիս հեղինակին առավել հստակ ձևակերպելու սեփական գեղարվեստական դիրքորոշումը: Մ. Բախտինը, անդրադառնալով երկխոսայնությանը, նշում է նաև, որ խոսքային գործունեությունը երկու տարատեսակ ունի՝ երկխոսություն և մենախոսություն: Մենախոսությունն իր հերթին դիտարկվում է որպես երկխոսության ենթատեսակ. «յուրաքանչյուր մենախոսություն մեծ երկխոսության կրկնություն է (ռեպլիկա)»⁴: Հետևաբար կարելի է ասել, որ ստեղծագործությունը պատմամշակութային հեռապատկերում կարող է ներկայանալ և՛ մենատեքստ, և՛ նախատեքստ: Մ. Բախտինն այն համոզմանն էր, որ գեղարվեստական տեքստում առաջնային է ոչ թե ներմուծված տեքստը, այլ նրա գործառության նշանակությունը, և որ իրականում ոչ մի ձևակերպում չի կարող նոր կամ հին համարվել. այն ընդամենը միևնույն շղթայի մի օղակն է, որը շղթայակապից դուրս դիտարկման ենթակա չէ. «Ոչ մի ասույթ չի կարող ո՛չ առաջինը լինել, ո՛չ վերջինը: Այն միայն շղթայի օղակն է, և այս շղթայից դուրս հնարավոր չէ ուսումնասիրել: Չկա ո՛չ առաջին, ո՛չ վերջին խոսք, և երկխոսական համատեքստը չունի սահմաններ (այն գնում է դեպի անսահման անցյալ և անսահման ապագա)»⁵, - գրում է Մ. Բախտինը՝ այս կերպ սահմանելով մշակույթի ու գրականության շարունակականությունը, նրա արարչագործական հավիտենական հնարավորությունը, ամենագոյու-

⁴ Бахтин 1975, 296.

⁵ Бахтин 1979, 373.

թյունը ներկայում, անցյալում և ապագայում՝ հավերժական հեռուներում, նրա առանձին «մասնիկների» «տրոհումն» ու հավերժական վերածնունդը:

Բախտինյան հայեցակարգն ու տեսական-մեթոդաբանական հիմքերն առավել արդիական դարձան ու տեսական գրականության մեջ սկսեցին լայնորեն գործածվել նախ արևմտյան իրականության մեջ՝ մասնավորապես ֆրանսիական հետմոդեռնիստական գրականության վերլուծությունների ժամանակ: Որպես հետազոտության ինքնուրույն ուղղություն՝ միջտեքստայնությունը սկսեց հիմնավորապես ձևավորվել 1960-1970-ական թթ. և լայն տարածում ստացավ եվրոպական (Մ. Ռիֆֆաթեր, Ռ. Բարտ, Ու. Էկո) ու խորհրդային (Յու. Լոտման, Վ. Տոպորով) հետազոտողների շրջանում: Այն լայնորեն կիրառվել է կառուցվածքաբանության (Յու. Լոտման), հետմոդեռնիզմի և հետկառուցվածքաբանության (Յու. Կրիստևա, Ռ. Բարտ, Մ. Ռիֆֆաթեր, Ժ. Դերիդա և ուրիշներ) տեսության շրջանակներում: Գրապատմական առումով հարկ է հիշատակել, որ եզրույթը տեսական գրականության մեջ սկսել է գործածել ֆրանսիացի հետազոտող Յու. Կրիստևան «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» հոդվածում (1967): Նա, իր հայեցակարգերի հիմքում ունենալով բախտինյան հիմնավորումներն ու մոտեցումները, վերաիմաստավորելով Մ. Բախտինի «Բովանդակության, նյութի և ձևի խնդիրը բանավոր գեղարվեստական ստեղծագործություններում» (1924) աշխատությունը, եզրակացնում է, որ այդ եզրույթի բուն էությունը դրսևորվում է յուրաքանչյուր տեքստային կառուցում, քանի որ յուրաքանչյուր տեքստ իր մեջ կրում է մեկ այլ տեքստ, բազմաթիվ իմաստային համադրումներով կառուցվում որպես «քաղվածքների խճանկար». «Յուրաքանչյուր տեքստ կառուցվում է որպես քաղվածքների խճանկար, յուրաքանչյուր տեքստ ինչ-որ այլ տեքստի յուրացումն ու փոխակերպումն է: Դրա հետ մեկտեղ միջուկայնությունն ու հասկացության հիմքում ընկած է միջտեքստայնությունն ու հասկացողությունը, և պարզվում է, որ բանաստեղծական լեզուն ենթակա է առնվազն կրկնակի ընթերցանության»⁶, - եզրակացնում է Յու. Կրիստևան՝ անդրադառնալով նաև այն խնդրին, որ գրական ստեղծագործությունը, հարատևելով ժամանակների մեջ, լեզվական նշանների որոշակի փոփոխության է ենթարկվում՝ ստեղծելով նոր ներտեքստային փոխհարաբերություններ, հետևաբար ձեռք բերելով նաև նոր իմաստներ:

Հետագայում հետազոտողը, դիտարկելով գրականության իմաստի, նրա գոյության դիալեկտիկան՝ հիմքում ունենալով Մ. Բախտինի միջտեքստային կապերի տեսական ձևակերպումները, ընդլայնում է իր հետևություններն այդ երևույթի եզրութաբանական բովանդակության մասին՝ նշելով, որ գեղարվեստական տեքստի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ միաժամանակ մի քանի նշանային համակարգեր կարող են փոխհարաբերակ-

⁶ Крестева 2000, 429.

ցելով «տեղավորվել» տեքստում: Ավելին՝ տեքստը տեքստի մեջ կարող է արտացոլել արվեստի տարբեր ոլորտներ, բառային միջոցներով փոխանցել երաժշտական կամ գեղանկարչական ստեղծագործության ձևն ու բովանդակությունը, լայն առումով՝ այն իր մեջ կարող է փոխակերպել ոչ միայն մեկ այլ տեքստ, այլև ուրիշ նշանագիտական համակարգերի «տեքստեր»՝ նկարներ, լուսանկարներ, կոթողներ և այլն: Համաձայն նրա՝ նկարը «ոչ այլ ինչ է, քան այն վերլուծող տեքստ»⁷: Թերևս այս հիմքերի վրա է ձևավորվել գերմանացի գրականագետ Օգե Հանգեն-Լևեի առաջադրած «Միջմեդիականություն և միջտեքստայնություն. բառի և պատկերավոր արվեստի փոփոխարարության խնդիրները»⁸ ուսումնասիրության մեջ հիմնավորված «միջմեդիականություն» եզրույթը, որը ենթադրում է կոնկրետ տեքստում միջտեքստային կապերի յուրահատուկ որակ, որում փոփոխարարակցվում են արվեստի տարաբնույթ ձևեր (պոեզիա-երաժշտություն, ֆիլմ-պոեզիա և այլն): Այս իմաստով՝ բրիտանացի հրապարակագիր Ս. Մորլին ժամանակակից արվեստին նվիրված իր դիտարկումներում գործածում է «անդրմեդիականություն» եզրույթը, երբ որոշակի երևույթ, որոշակի միջավայր գտնվում են մեկ այլ միջավայրի հետ հիերարխիկ բնույթի հարաբերակցության մեջ, ինչպես, օրինակ, պատկերը ենթակա է տեքստին և հակառակը՝ ընդհուպ «ինտերմեդիականություն», «որտեղ տեքստի և պատկերի միջև տարբերակումը խախտվում է, ձևավորվում է խառնածին ձև»⁹:

Այսպիսով, «միջտեքստայնություն» եզրույթի հետագա զարգացման միտումները պայմանավորված են Ռ. Բարտի հայեցակարգերով: Նա տարբեր հարթությունների վրա է դիտարկում տեքստն ու ստեղծագործությունը. տեքստը «երկրորդային» իրականություն է, անընդհատական, հավերժ նորացող եղելությունների, իրավիճակների ամբողջություն, օժտված է շարժունակ (դինամիկ) բնույթով, և հարկ չէ տեքստի մեջ սկզբնաղբյուր որոնել: Տեքստն իր բնույթով անհայտ, «անստորագիր» եղելությունների համագումար է, նաև՝ «արդեն կարդացված մեջբերությունների կամ առանց չակերտների մեջբերությունների»¹⁰ ամբողջություն:

1960-1970-ական թթ. Ռ. Բարտը նորովի է իմաստավորում միջտեքստայնության տեսությունը՝ 1968 թ. գրված «Հեղինակի մահը» խոհագրության մեջ հայտարարելով, որ հեղինակն այլևս «դադարել է լինել տեքստի իմաստի միակ սկզբնաղբյուրը»¹¹: Ռ. Բարտը «մեջտեքստայնություն» երևույթի մասին հետևյալն է ձևակերպել. «Յուրաքանչյուր տեքստ հանդիսանում է միջատեքստ (ինտերտեքստ), մնացած տեքստերը նրա մեջ ներկա են տար-

⁷ Kristeva 1981, 310.

⁸ Hansen-Löve 1983, 291-360.

⁹ Morley 2003, 12.

¹⁰ Հմմտ. Բարտ 1989, 418:

¹¹ Բարտ 1989, 391.

բեր աստիճաններով փոքրիշատե ճանաչողական ձևերով՝ նախորդ մշակույթի տեքստեր և շրջակա մշակույթի տեքստեր: Յուրաքանչյուր տեքստ հին մեջբերումներով նոր հյուսվածք է, մշակութային ծածկագրերի կտորներ, ֆորմուլաներ, ռիթմական կառույցներ...: Բոլոր դրանք յուրացված են տեքստում և խառնված նրա մեջ, քանի որ մշտապես մինչ տեքստը և նրա շուրջը գոյություն ունի լեզուն»¹²:

«Միջտեքստայնություն» երևույթի բարտյան ուսումնասիրության մեթոդներն իրենց յուրահատուկ դրսևորումներն ունեցան արտասահմանյան ու ռուսական լեզվաբանության մեջ և նշանավորվեցին Ու. Էկոյի ու Վ. Տոպորովի ուսումնասիրություններով: Ու. Էկոն, միջտեքստային կապերի մասին իր դիտարկումներում գործածում է «միջտեքստային երկխոսություն» հասկացությունը՝ այն սահմանելով որպես առանձնահատուկ մի «երևույթ, որի ներքո կոնկրետ տեքստում կրկնվում են նախորդ տեքստերը... յուրաքանչյուր գիրք խոսում է միայն այլ գրքերի մասին և բաղկացած է միայն այլ գրքերից»¹³:

«Միջտեքստայնություն» հասկացության լայն և նեղ իմաստներով սահմանումների առանձնահատկությունները

Ժ. Ժենետը, հեռանալով նշյալ եզրույթի հետկառուցվածքաբանական մոտեցումներից, միջտեքստային փոխհարաբերակցության խնդրին մոտենում է կառուցվածքային պոետիկայի դիրքերից՝ փորձելով իմաստաբանական բոլոր հատկանիշներով արդեն որոշակիացված եզրութային նշանակությունը լրացնել նոր իմաստներով: Միջտեքստային փոխհարաբերակցության բազմաբնույթ տեսակներն ընդհանրացնող, արդեն իսկ հստակորեն սահմանված «միջտեքստայնություն» եզրութին նա տվել է նեղ մեկնաբանություն՝ այն ձևակերպելով որպես «անդրտեքստայնություն» կամ «տեքստային անդրանցականություն»¹⁴: «Անդրտեքստայնություն» եզրութը, միևնույն եզրութահամակարգում ընդունելով «միջտեքստայնություն» եզրութի հոմանիշ, վերջինս տեսակավորելով՝ դասակարգում է, թեև այդ տարբերակումները հեղինակն ինքը վերջնական ամփոփ տարբերակ չի համարում: Արդյունքում այդ նորամուտ եզրութներից որոշները, օրինակ, արքետեքստայնություն եզրութը, գրեթե դադարել է գործածվել. մնացածները որոշակի իմաստային լրացումներով, փոխակերպումներով երբեմն ըստ անհրաժեշտության գործածվում են:

Նեղ իմաստով միջտեքստայնությունը սահմանվում է որպես ոչ թե յուրաքանչյուր տեքստի, այլ որոշակի տեքստերի յուրահատուկ բնութ, երբ որևէ տեքստ կրում է կոնկրետ և թաքնված հղումներ նախորդ տեքստերին:

¹² Барт 1989, 418.

¹³ Эко 2003, 107.

¹⁴ Հմմտ. Genette 1982, 2-5:

Միջտեքստայնության այսօրինակ ընկալումը հատուկ է Լ. Դելլենբախի, Ռ. Լախմանի, Ի. Սմիրնովի, Յու. Սոլոդուբի, Ն. Կուզմինայի, Ն. Ֆատենայի և այլոց հայեցակետերին: Ի. Սմիրնովը, օրինակ, միջտեքստայնությունը դիտարկում է երեք տարբեր մակարդակներում՝ գաղափարաբանական դիրքերից, նշանագիտության շրջանակներում և հաղորդակցական հիմքերից: Նրա ձևակերպմամբ՝ միջտեքստայնությունն այն է, երբ «գեղարվեստական ստեղծագործության իմաստը մասնակիորեն կամ ամբողջությամբ ձևավորվում է՝ մեկ այլ տեքստ մեջբերելու հետևանքով, որը որոնվում է միևնույն հեղինակի ստեղծագործության մեջ, հարակից արվեստում... կամ էլ նախորդ գրականության մեջ»¹⁵: Վ. Տոպորովն իր հերթին առանձնացնում է միջտեքստայնության «ինքնամիջտեքստայնություն» տարատեսակը, որի դեպքում տեքստը կառուցվում է նույն հեղինակի մեկ այլ տեքստից քաղված ինքնամեջբերության հիմքերի վրա¹⁶: Իսկ Ի. Առնոլդի դիտարկումներում միջտեքստայնության գաղափարաբանության հիմքում այն եզրահանգումն է, որ «միջտեքստայնություն» հասկացությունը վերաբերում է այն տեքստին, որը պարունակում է այլ տեքստերից հատվածներ՝ մեջբերությունների, ակնարկների ու ռեմինիսցենցիաների տեսքով¹⁷:

Իսկ լայն իմաստով՝ միջտեքստայնությունը ձևակերպվում է որպես յուրաքանչյուր տեքստի յուրահատուկ որակ. այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր տեքստ դիտվում է միջատեքստ: Այս ընկալման հիմքերը հունավորվում են Ռ. Բարտի և ֆրանսիական հետկառուցվածքաբանության ուղղության ներկայացուցիչների աշխատություններից (Յու. Կրիստևա, Ժ. Դերիդա, Ռ. Բարտ), ինչպես նաև Յու. Լոտմանի հայեցակարգերից:

Միջտեքստայնությունը՝ որպես բանաստեղծական տեքստի իմաստաստեղծ գործոն

Միջտեքստային կապերը կարող են դրսևորվել ինչպես նույնականորեն, այնպես էլ փոխակերպված, նոր տեքստային կառույցին համասեռված, ակնհայտ կամ թաքնված կերպով: «Ուրիշի խոսքը» փոխառելու ամենաակնառու ձևը թերևս ուղղակի մեջբերումներն են, որոնք, ներմուծվելով նոր տեքստային տարածություն, ձեռք են բերում նոր դրսևորում ու նոր երանգավորում, արտահայտվում ուղղակի, միջնորդավորված, հակիրճ ու ընդարձակ ամենատարբեր վերակերպություններով: Հենց այդ քաղվածքների մեջ են ամփոփված-թաքնված լինում հեղինակային-աշխարհայացքային հիմնարար մտադրությունները: Որպես օրինակ բերենք Է. Միլիտոնյանի բանաստեղծությունը, որի մեջ հեղինակն ուղղակիորեն գործածում է այլ տեքստա-

¹⁵ Смирнов 1995, 193.

¹⁶ Հմմտ. Топоров 1998, 9:

¹⁷ Հմմտ. Арнольд 2005, 71-72:

յին մեջբերումներ՝ միաժամանակ նշելով սկզբնաղբյուրային տեքստի հեղինակներին.

Եթե ծառ տեսնես, հաշվի՛ր նրա տերևները

Եվ հիշի՛ր՝ (կարծեմ Տիմիրյազևի խոսքը) ոչ մի տերև մյուսին նման չէ:

Եվ հայիոյի՛ր ինքդ քեզ:

Եթե ծառ չկա պատուհանից այն կողմ, նայի՛ր ամպերին,

Տես նրանց թափառ, անօթևան կյանքը

Եվ հիշի՛ր՝ (կարծեմ Բոդլերի խոսքը) Ամպերն եմ սիրում...¹⁸:

Է. Միլիտոնյանի նշյալ բանաստեղծության մեջ նախադեպային տեքստերը՝ արտահայտված ուղղակի, միջնորդավորված կերպով, դառնում են բանաստեղծական-հյուսվածքային յուրահատուկ առանցք, փիլիսոփայական ու խոհական տրամադրություններ իմաստավորելու միջոց:

Բանաստեղծական տեքստում միջտեքստային կապերի ակնառու օրինակ է նաև Ա. Ավագյանի բանաստեղծությունը, որի գոյության նախադրյալները գալիս են հայ ժողովրդի լինելիության չարենցյան բանաձևման խորքերից՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է».

Չկա մի հայ, որ չիմանա միասնության կարգախոսը.

չկա մեկը, որ չիմանա չարենցյան պատգամը.

«Ով հա՛յ ժողովուրդ, քո փրկությունը

քո հավաքական ուժի մեջ է»¹⁹:

Հեղինակը վերաիմաստավորում ու վերահաստատում է չարենցյան աշխարհատեսությունը՝ նոր բանաստեղծական տարածության մեջ ապահովելով բոլոր ժամանակների համար գրված չարենցյան ծածկագրված պատգամի խորքն ու էությունը, նրա աշխարհագրագողության յուրահատուկ բնույթը՝ չարենցյան նույն ուղեգծով խտացնելով ու խորացնելով սեփական աշխարհայացքային կողմնորոշումը:

Դասական հայտնի ստեղծագործություններից բացի, որպես միջտեքստային տարրեր կարող են հանդես գալ նաև բանահյուսական ստեղծագործությունները, սուրբգրային միջերն ու միջական գաղտնագրերը, խորհրդանիշները, սյուժեները և այլն: Նշյալներից առավել կիրարկականը թերևս աստվածաշնչյան տեքստն է, որը, ներմուծվելով այլ գեղարվեստական համակառույց, դառնում է ստեղծագործության բովանդակային-թեմատիկ պլանի իմաստային առանցքը:

Արդի բանաստեղծությամբ հունավորվող տեղաշարժերի բնույթում հարկ է առանձնացնել ջրհեղեղի ու Նոյի տապանի «միջական» նախա-հիմքային պատկերով խառնածին համատեքստով օժտված բանաստեղծություններն ու բանաստեղծական ժողովածուները: Ջրհեղեղի ու Նոյի քրիստո-

¹⁸ Միլիտոնյան 1996, 69:

¹⁹ Ավագյան 2004, 137:

նեական միջը գեղարվեստորեն մարմնավորվեց Հ. Էդոյանի, Հ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի, Հ. Մովսեսի, Հ. Թամրազյանի և այլ բանաստեղծների քնարական շարքերում, որոնք, շարունակելով իրենց մեջ անտիկյան մտապատկերներ կրող ավանդույթները, սկզբնավորեցին նոր ավանդույթ՝ ազգային գրականության հորիզոնները բացելով համաշխարհային իրականության առջև:

Այսպիսով, օրինակ, Հ. Մովսեսի՝ միջական ու բանաստեղծական տարրերի հարաբերության խտացումով հյուսված նշյալ բանաստեղծության մեջ ընդհանրացված է «ջրհեղեղ» կոչվող «կյանք» հասկացության ընդհանրական կողմը.

Ինչ ջրհեղեղ է այսպես անգո,
ոչ սկիզբ ունի և ոչ էլ վերջ:
- Ճոճվում է սիրտը՝ տապանը քո,
այս անծայրածիր ջրերի մեջ²⁰:

Երկկողմանի փոխազդեցություններից կառուցված այս հյուսվածքում մի կողմից անդրադարձվում է կյանքի հորձանքների, հույզերի ու կրքերի շարժունակ բազմազանությունը, մյուս կողմից՝ մարդու վիճակի ու հոգու շարժնթաց փոխակերպությունները:

Հ. Թամրազյանի բանաստեղծության առանցքում որպես պատկերավոր մտածողության խարիսխ գործում է քրիստոնեական պայմանականությունների ուժային շարժման քնարական-խառնածին այն մեկնակետը, ինչը բնորոշ է Հ. Մովսեսի վերոբերյալ բանաստեղծությանը.

Դու կաս, իբրև հիշող արյուն,
Արյան կանչ է, արյան անուրջ,
Թե ինչպես էր Նոյը նայում
Իր աշխարհին լեռան լանջից...
Եղիցի՜ լույս: Եվ լո՛ւյս եղև:
Ու քեզ հետ են միշտ էլ եղել
Երազներիդ ջրհեղեղը
Ու արթնացման ջրերը ջինջ²¹:

Փոխաբերական-նկարագրական այս կերպը հանգում է մտքի ու զգացմունքի շարժումը զգայական պատկերների փոխարկելու, այդ ուղիներով հոգեաշխարհային տեղաշարժեր իմաստավորելու նպատակին: Միջակիրառման առանձնահատկության տեսանկյունից բանաստեղծություններն առանձնանում են նախադեպային տեքստի՝ քրիստոնեական միջական պատկերների խտացումներով, որոնք ընդգրկում են ստեղծագործության սյուժետային ու իմաստաբովանդակային ոլորտները:

²⁰ Մովսես 2005, 36:

²¹ Թամրազյան 2008, 220:

Միջտեքստայնությունը նշանագիտության սահմաններում

Նշանագիտական (սեմիոտիկական) մոտեցումներով տեքստն ընկալվում է որպես նշանային ամբողջականություն, իսկ միջտեքստային փոխհարաբերակցությունները՝ տեքստում ամփոփված նշանային համակարգի փոխհարաբերակցություն: Այս մոտեցման հիմքերը հարկ է փնտրել Ռ. Յակոբսոնի, Ռ. Բարտի, Յու. Լոտմանի, Ու. Էկոյի և այլոց աշխատություններում:

Նշանագիտական համակարգի փոխհարաբերակցության ու փոխկապակցվածության շրջանակներում միջտեքստայնության դիտարկումների առավել ընդլայն մոտեցումները բնորոշ էին Յու. Լոտմանի հիմնադրած Տարտու-մոսկովյան նշանագիտության դպրոցի ներկայացուցիչներին (Յու. Լոտման, Պ. Թորոպ, Ռ. Տիմենչիկ): Համաձայն Յու. Լոտմանի՝ մշակույթը, իբրև ամբողջական «կառուցվածք», կարող է դիտարկվել տեքստ. տեքստն ընկալվում-իմաստավորվում է որպես մշակութային երևույթ. «Ինչպես մշակույթն ամբողջությամբ, - գրում է Յու. Լոտմանը, - այնպես էլ նրա մեջ ներառված բավականաչափ բարդ տեքստերից յուրաքանչյուրը, և ներառյալ առանձին մարդկային անհատականությունը, դիտարկվում է որպես տեքստ»²²: Նա բազմաթիվ ձևակերպումներով նշել է, որ գրական-գեղարվեստական տեքստում, ներտեքստային կապերից զատ, գոյություն ունի նաև արտատեքստային փոխհարաբերակցություն: Տեքստի հիմքում ընկած է բառը, բառի հիմքում՝ հասկացությունը: Տեքստի յուրաքանչյուր բառ ընկալվում է ոչ միայն տվյալ տեքստի համապատկերում, այլև դրանից դուրս՝ տարաժամանակյա կտրվածքով տեքստային այլ կառույցներում և այլն: Քանի որ տեքստը, ըստ էության, ստեղծվել է կոնկրետ ժամանակաշրջանում, կրելու է նաև պատմական կոնկրետ պայմանականություններ: Ընդհանուր առմամբ՝ միջտեքստայնությունը լոտմանյան նշանագիտական մոտեցման շրջանակում ընկալվում է որպես մշակութային զարգացման հարատև հոսք, որն իր ընթացքի մեջ անպայմանորեն առնելու է արտատեքստային իրողություններ՝ նյութական իրականության ընկալման այլևայլ դրսևորումներով, ավելին՝ «Տեքստն արտատեքստային «ֆոնից» անջատ ընկալելն անհնար է»²³: Հետևաբար, նյութական իրականությունն իր թանձրացական ու վերացական իրողություններով դուրս չի մղվում տեքստային տարածությունից, ընդհակառակը, գեղարվեստական տեքստի առանձնահատկությունն այն է, որ այն կառուցվում է նյութական իրականության, նրա բազմազան երևույթների արտացոլման հիմքերի վրա:

Զարգացնելով այս գաղափարը՝ Յու. Լոտմանն առանձնահատուկ շեշտում է այն տեսակետը, որ մշակութային դաշտում տեքստը, որն օժտված է

²² Лотман 2000, 641.

²³ Лотман 1994, 213.

բարդ կառուցվածքով և տարաբնույթ գործառույթներ կատարող երևույթ է, որպես կանոն, հիմնականում երեք էական գործառույթ է իրականացնում.

1) տեղեկատվության ճշգրիտ փոխանցում.

2) նոր գաղափարների զարգացում, որի դեպքում տեքստը ոչ միայն կայուն տեղեկատվություն, այլև նոր իմաստներ կրող երևույթ է.

3) «մշակութային հիշողության», մշակութային ավանդույթների պահպանում, երբ տեքստն ի զորու է պահպանելու «...հիշողություններ իր նախորդ ենթատեքստերից..., որոնց մեջ տվյալ տեքստը իմաստ է ստանում, և որոնք որոշակի ձևով ասես ներառված են դրանում, կարելի է անվանել տեքստային հիշողություն»²⁴:

Տեքստի հիմնական կառուցվածքային հատկանիշը նրա իմաստային հյուսվածքների համաձուլված բնույթի մեջ է: Տեքստն ընկալվում է որպես տարաբնույթ նշանագիտական տարածությունների համակարգ, որն իր շարունակական ընթացքի մեջ շրջանառում է որոշակի փիլիսոփայական հիմնահարցեր. փիլիսոփայական, քանի որ այն մշակութային ինքնագիտակցություն է, որը խտացնում է այս կամ այն պատմական ժամանակահատվածի հասարակական կյանքի զարգացումը: Այս ամենի հետ մեկտեղ տեքստի մեջ ձևավորված հայեցակարգային փոխներթափանցումները, տարաբնույթ կառուցվածքային ներդաշնակությունների միջև յուրահատուկ շղթայակապ հյուսվածքն ապահովում են տեքստի իմաստային հնարավորությունների վերընթացը՝ տեքստն օժտելով նորանոր իմաստներ ու գաղափարներ արարելու ներուժով:

Այս կերպ, համաձայն Յու. Լոտմանի, «միջտեքստայնություն» կամ, ինչպես ինքն է ձևակերպում համանուն հոդվածում, «տեքստը տեքստի մեջ» հասկացության էությունն ու բովանդակությունն առաջին հերթին նշանագիտական համակարգի փոխհարաբերակցության կամ փոխներգործության մեջ են: Մշակութային դաշտում անպակաս են նշանային միջոցները, տեքստային կառույցում դրանք ըստ անհրաժեշտության համակարգելու հնարավորությունները՝ անսահման, և կոչված են բացելու բովանդակության իմաստն ու գաղտնագրելու ու գաղտնագրեծելու դրանցում ամփոփված ենթադրությունները, տեքստի նշանագիտական-կառուցվածքային, բառային ու ոճական հնարավորությունների տարաբնույթ շերտերը տեսակավորված համախմբելու, լեզվի և խոսքի պատկերավոր-արտահայտիչ դրսևորման միջոցները և այն ամենը, ինչը կարող է տեղավորվել «նշանագիտական տարածության» լեզու կամ «գիտություն նշանների մասին» հասկացության մեջ: Այդ, այսպես կոչված՝ «նշանագիտական լեզվի»՝ նշանոլորտի կամ նշանագիտական տարածության՝ բազմաբնույթ մշակութային լեզուների հարատև փոխհարաբերությունների յուրօրինակ դաշտի ձևավորման հարցում ա-

²⁴ Лотман 2000, 162.

ռանցքային են մշակութային ծածկագրերը, խորհրդանիշներն ու նշանները, որոնք, տարակերպումներով հաստատված լինելով համաշխարհային մշակույթի խորքային շերտերում, ինչպես հայտնի է, իրենց հերթին մշակույթի զարգացման գործընթացում կարևորագույն գործառույթ են իրականացնում և ունակ են վերափոխվելու-վերափմաստավորվելու «կախված նրանից, թե ինչ մշակութային գաղտնագրեր են արդիական պատմական տվյալ փուլում»²⁵:

Այդ եզրույթի գործառույթը, սակայն, չի սահմանափակվում միայն բանասիրական գիտությունների ժամանակակից հետազոտական շրջանակով: Այն կարող են գործածել նաև այլ գիտակարգեր. դա են վկայում տարբեր գիտակարգերի բազմաբնույթ մոտեցումներն ու սահմանումները: Եզրույթը, օրինակ, կարող է հատկանշվել պատմամշակութաբանական, իրավաբանական, նույնիսկ քաղաքական յուրացումներով և այլն:

Եզրակացություններ

Այսպիսով, կարելի է ասել, որ «միջտեքստայնություն» եզրույթը, որն ուսումնասիրում են ամենատարբեր հետազոտողներ ամենատարբեր դիտանկյուններից, սահմանվում է նախ որպես նոր տեքստ ձևավորելու միջոց (Պ. Թորոպ, Ն. Ֆատեևա), միևնույն տեքստում մեկ կամ մի քանի տեքստերի համագոյակցություն (Ժ. Ժենետ), գեղարվեստական ձևերի երկխոսություն (դիալոգ), տեքստերի փոխկապակցված փոխհարաբերակցություն, միջտեքստային հաղորդակցություն, «աշխարհը որպես տեքստ» դրույթ (Դերիդա), կամ էլ մշակույթի հարատև զարգացող ու ձևավորող հավերժաշրջայի համապատկերում այն սահմանվում է որպես «տեքստ-տեքստի մեջ» հյուսվածք (Լոտման): Սրանք են «միջտեքստայնություն» երևույթի մասին XX դարի գրականության տեսության առաջադրած հիմնադրույթները, որտեղ տիրապետող է «երկվապաշտական» տրամաբանության սկզբունքը: Հարկ է նկատել, որ հետազոտողների ծանրակշիռ մասը հակված է ընդունելու միջտեքստայնության սահմանման լոտմանյան տեսակետը՝ «միջտեքստայնություն» երևույթի հիմքում ընդունելով «տեքստ-տեքստի մեջ» հասկացության տիրապետությունը, այսինքն՝ այս կամ այն սյուժեների ու մոտիվների կամ առանձին տեքստի որոշակի հատվածների և այլնի՝ այլ հեղինակի կողմից սեփական տեքստում վերաձևակերպում-վերափմաստավորումը, նոր իմաստով ու նոր բովանդակությամբ վերամարմնավորումը՝ համապատասխան հավերժորեն վերափոխվող, նորացվող իրականության, անվերջ նորոգվող մշակույթի: Նույնիսկ Ռ. Բարտը, որը հայտարարել էր «հեղինակի մահվան» գաղափարի մասին, միջտեքստայնության մասին իր ձևակերպումներում խոստովանում է, որ «յուրաքանչյուր տեքստ նոր նյութ է, թեկուզ

²⁵ Леута, Лотман 2002, 173.

և հյուսված հին տեքստերից, հին մեջբերումներից»²⁶: Լեզվամշակութաբանության մեջ «միջտեքստայնություն» երևույթի ընկալման բարտյան այս սահմանումն է տրամաբանորեն ընդունելի համարվում: Խոսելով վերջինիս մասին՝ հարկ է նշել նաև, որ կան հետազոտողներ (Ա. Բեգրուկով, Ն. Կուզմինա, Ի. Իլյին և այլք), որոնք հակված են ընդունելու, որ միջտեքստայնության սահմանման ճշգրիտ բանաձևը տրամաբանական է փնտրել հենց Ռ. Բարտի աշխատություններում: Շատերի կարծիքով էլ (Ի. Իլյին, Ն. Ֆատեևա և ուրիշներ) միջտեքստայնության հասկացակարգի հիմնաքարը տրամաբանական է համարել Ժ. Դերիդայի փիլիսոփայական հայեցակարգը, այն է՝ վերջինիս տեսականորեն հիմնավորած կառուցալուծարման մեթոդը:

Այսպիսով, միջտեքստայնության առանցքային գործառույթը նոր իմաստներ ձևավորելու, ինչպես նաև արդեն ստեղծված տեքստը վերաձևակերպելով վերափմաստավորելու, նրա մեջ նոր իմաստային շերտեր հայտնաբերելու մեջ է:

Չնայած «միջտեքստայնություն» եզրույթի բազմաբնույթ մեկնություններին՝ այն չի փոփոխում իր բուն էությունը, այն է՝ դրսևորման երկխոսական բնույթը: Հեղինակը, կերտելով սեփական ստեղծագործական կառույցը, գիտակցված կամ անգիտակցական մղմամբ երկխոսական գործընթաց է ծավալում այլ հեղինակային տեքստերի հետ՝ փոխակերպելով հինը, կառուցում է նորը:

Աշխարհը միջտեքստայնության ոսպնյակի միջով պատկերվում է որպես անձայրածիր տեքստ, որում ամեն ինչ ասված է: Այս տրամաբանությամբ հանգում ենք այն սկզբունքին, որ յուրաքանչյուր նորը երկխոսական տարրերի փոխակերպումների միջոցով է որոշակիացնում իր թեմատիկ սահմանները՝ ոճական հակադրամիասնությամբ կերտելով նորագույն արժեք, ընդօրինակվող, կրկնվող ձևերի մեջ մնալով յուրատեսակ ու այժմեական:

Ամփոփելով միջտեքստայնություն եզրույթի ուսումնասիրության մասին ասվածները՝ գալիս ենք այն եզրակացության, որ բոլորը հիմնված են մեկ հայեցակետի վրա: Դա Մ. Բախտինի հայեցակետն է, որը միջտեքստայնությունը դիտարկում է որպես տեքստ, որն ապրում է «միայն հաղորդակցվելով մեկ այլ տեքստի (համատեքստի) հետ: Միայն տեքստերի այս շփման կետում է լույս առկայծում՝ լուսավորելով և՛ առաջ, և՛ հետ՝ կցելով տվյալ տեքստը երկխոսությանը»²⁷:

Օգտագործված գրականություն

Ավագյան Ա. 2004, Սերմնացու լույս, Երևան, «Դրագարկ», 222 էջ:

Թամրագյան Հ. 2008, Մայր հղացք, Երևան, «Նաիրի», 220 էջ:

Միլիտոնյան Է. 1996, Նոր թվարկություն, Երևան, «Նաիրի», 1996, 128 էջ:

²⁶ Барт 1994, 424.

²⁷ Бахтин 1979, 365.

- Մոսկովսկի Հ. 2005, Բանաստեղծություններ, Երևան, «Նաիրի», 532 էջ:
- Арнольд И.В. 2005, Стилистика. Современный английский язык, Москва, «Наука», 384 с.
- Барт Р. 1989, Избранные работы. Семиотика. Поэтика, Москва, «Прогресс», 616 с.
- Барт Р. 1994, Избранные работы. Семиотика. Поэтика, Москва, изд. группа «Прогресс», «Универс», с. 493.
- Бахтин М.М. 1975, Вопросы литературы и эстетики, Москва, «Художественная литература», 504 с.
- Бахтин М.М. 1979, Эстетика словесного творчества, Москва, «Искусство», 426 с.
- Бахтин М.М. 1979, Проблемы поэтики Достоевского. 4-е изд., Москва, «Советская Россия», 318 с.
- Кристева Ю. 2000, Французская семиотика: от структурализма к постструктурализму, Москва, с. 427-457.
- Кристева Ю. 2013, Семиотика: исследования по семанализу (пер. с фр. Э.А. Орловой), Москва, «Академический проект», 285 с.
- Леута О.Н., Лотман Ю.М. 2002, О трех функциях текста, Вопросы философии, N 4, с. 165-173.
- Лотман Ю.М. 1994, Лекции по структуральной поэтике, Ю.М. Лотман и Тартуско-Московская семиотическая школа, Москва, «Гнозис», 560 с.
- Лотман Ю.М. 2000, Семиосфера, СПб., «Искусство-СПБ», 704 с.
- Смирнов И.П. 1995, Порождение интертекста. Элементы интертекстуального анализа с примерами из творчества Б.Л. Пастернака, СПб., СПбГУ, 190 с.
- Топоров В.Н. 1998, Об одном индивидуальном варианте «автоинтертекстуальности»: случай Пастернака, Пастернаковские чтения, Российская академия наук, Институт мировой литературы им. А.М. Горького, вып. 2, Москва, с. 4-37.
- Эко У. 2003, Шесть прогулок в литературных лесах, СПб., «Симпозиум», 285 с.
- Ямпольский М.Б. 1993, Память Тиресия: интертекстуальность и кинематограф, Москва, «Инфра-М», 408 с.
- Kristeva J. 1981, Le langage, cet inconnu. Une initiation à la linguistique. Paris, Seuil, 327 p.
- Hansen-Löve O. 1983, Intermedialität und Intertextualität: Probleme der Korrelation von Wort und Bildkunst, V.W. Schmidt, W.-D. Stempel (Hrsg.), Dialog der Texte, Wien, S. 291-360.
- Genette G. 1982, Palimpsests: Literature in the Second Degree, Nebraska, University of Nebraska Press, 491 p.
- Morley S. 2003, Writing on the Wall: Word and Image in Modern Art, Berkeley, University of California Press, 224 p.

ПРОБЛЕМЫ ХАРАКТЕРИСТИКИ ПОНЯТИЯ «ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ» И ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ

Рипсиме Закарян

Резюме

Термин «интертекстуальность» впервые был использован французским теоретиком постструктурализма Ю. Кристевой в 1967 г., в статье «Бахтин, сло-

во, диалог и роман». Ю. Крестева в своих исследованиях переосмысливает идею М. Бахтина о межтекстовом диалоге, согласно которой каждое произведение сгущает исторический опыт культурных связей, вступает с последним в «диалогический» процесс. Каждый текст, тайным или явным образом, соотносится с другими текстами культуры. Таким образом, интертекстуальность понимается как особое качество каждого текста.

Интертекстуальность трактуется также в «широком» (Ю. Крестева, Ж. Деррида, Р. Барт) и «узком» (И.П. Смирнов, Ю.П. Солодуб, Н.А. Кузьмина, Н.А. Фатеева) смыслах. В широком смысле интертекстуальность понимается как уникальное качество каждого текста. Каждый текст воспринимается как интертекст, который может стать прецедентным текстом для новосозданного текста. В узком смысле интертекстуальность трактуется как особое качество тех или иных текстов; проявления интертекстуальности заметны не во всех текстах.

В семиотическом плане текст воспринимается как знаковая целостность, а интертекстуальные связи – как взаимосвязь знаковой системы, включенной в текст. Основы этого подхода следует искать в исследованиях Ю. Лотмана.

Ключевые слова – интертекстуальность, текст, прецедентный текст, семиотика, культура, философия, художественное произведение.

THE MAIN PROBLEMS AND TYPICAL CHARACTERISTICS OF THE CONCEPT OF "INTERTEXTINITY"

Hripsime Zakaryan

Abstract

The term "intertextuality" was first used by the French theorist of post-structuralism Y. Kristeva in the 1967 article "Bakhtin, word, dialogue and novel". Yu. Kristeva, based on her concepts of M. Bakhtin's theory of polyphonism, in her research rethinks Bakhtin's idea of intertextual dialogue, according to which each work thickens the historical experience of cultural ties, enters into a "dialogical" process with the latter. Each text, secretly or explicitly, correlates with other texts of the culture. Thus, intertextuality is understood as a special quality of each text.

Intertextuality is also interpreted in the "broad" (Yu. Kristeva, J. Derrida, R. Bart) and "narrow" (I. P. Smirnov, Yu. P. Solodub, N. A. Kuzmina, N. A. Fateeva) senses. In a broad sense, intertextuality is understood as the unique quality of each text. Each text is perceived as an intertext, which can become a precedent text for a newly formed text. In a narrow sense, intertextuality is interpreted as a special quality of certain texts; manifestations of intertextuality are not noticeable in all texts.

In semiotic terms, the text is perceived as a sign integrity, and intertextual connections as the interconnection of the sign system included in the text. The foundations of this approach should be sought in the studies of Yu. Lotman.

Key words – intertextuality, text, case text, semiotics, culture, philosophy, work of art.